Վարպետաց-դաս հանդիպման հրավեր

ՀՀ Քաղաքաշինության նախարարության Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը «Երևանյան ճարտարապետական բիենալե–2014» միջոցառումների շրջանակում հոկտեմբերի 11-ին ժամը 12-ին կազմակերպում է «Հիդրոկայանների ամբարտակների և հիդրոկայանների նախագծման և կառուցման միջազգային փորձը» թեմայով վարպետաց դաս-հանդիպում՝ Կանադայից ժամանած կանադահայ ճարտարագետ Սուրեն Լաճեանի հետ: Վարպետաց դաս-հանդիպման ժամանակ նախատեսվում է ծանոթություն հիդրոկայանների կառուցման համաշխարահային փորձի, գործելաոճի, համաշխարհային մասնագետների հմտությունների և դրանց Հայաստանում ներդրման վերաբերյալ:

Վարպետաց-դասը տեղի կունենա ՀՀ ՔՆ Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում: Հասցե՝ Կառավարական շենք N 3, մուտքը՝ Ավ. Իսահակյանի անվան գրադարանի կողմից: